

Պեյրութի մեջ գործող Զովիկեան Հանրային գրասենեակը կը հրապարակէ դաժան ոճիրներու ճշմարտութեան բացայայտման եւ պատասխանատուութեան վերաբերեալ փոտքեսթ մը

Մամլոյ հաղորդագրութիւն



Զովիկեան Հանրային գրասենեակի հիմնադիր Լին Զովիկեան հրապարակեց ճշմարտութիւնը բացայայտող փոտքեսթ մը՝ «Փոքրագոյն ճշմարտութիւնները», որուն առաջին հիւրն էր միջազգային կրօնական ազատութեան առաջնորդ Նատին Մայենգա Նկարը Տահլիա Պուրիի կողմէ/Զովիկեան Հանրային գրասենեակ

Պեյրութ, Լիբանան – 14 հոկտեմբեր 2025: Շարունակուող անպատեւիտութեան եւ քաղաքական անտեսումի պայմաններուն մէջ, Զովիկեան Հանրային գրասենեակը հրապարակած է փոտքեսթներու շարք մը, որ կը կոչուի «փոքրագոյն ճշմարտութիւններ» (Smallest truths), որուն նպատակն է բացայայտել, թէ ինչպէս վերապրողներու կողմէ ճշմարտութեան բացայայտումը կ'ամրապնդէ դաժան ոճիրներու համար պատասխանատուութիւնը:

Ընդարձակելով ապրած փորձառութեան մը փոքրագոյն մանրամասնութիւնները, որոնք յաճախ արդարադատութեան գործընթացներուն մէջ ամենէն որոշիչ ապացոյցներն են, շարքը նպատակ ունի ճշմարտութիւնը ջնջումէ պաշտպանել եւ օգնել ուժը տեղափոխել ոճրագործներէն դէպի վերապրողներն ու անոնց դաշնակիցները:

Իւրաքանչիւր փոտքեսթ՝ տեւողութեամբ կարճ եւ վերլուծական ձեւաչափով, կ'արտացոլէ եւ կը համախմբէ դաժան ոճիրներու արձագանգելու տարիներու

գործնական փորձառությունը: Զրոյցները կը ներկայացնեն մարդասիրական դիւանագիտութեան եւ միջազգային մարկային իրաւունքներու բարոյական եւ ռազմավարական շրջանակը՝ արդարութեան հաւանականութիւնը բարձրացնելու, արժանապատուութիւնը առաջ մղելու, յիշողութիւնը պաշտպանելու եւ համայնքային սեփականատիրութիւնը խթանելու: Չափաւոր երկխօսութեան եւ հիմնաւորուած մտորումներու միջոցով, «Փոքրագոյն ճշմարտութիւնները» կ'ուսումնասիրէ, թէ ինչպէս կարելի է ամրապնդել միջազգային օրինական ընթացակարգը, քաղաքականութիւնը եւ մարդասիրական համակարգերը՝ կեդրոնանալով վերապրողներու ապացոյցներուն եւ բարոյական աջակցութեան վրայ:

«Ճշմարտութեան բացայայտումը արդարութեան առաջին ձեւն է», ըսաւ Լին Զովիկեան, Զովիկեան Հանրային գրասենեակի հիմնադիրը: «Այս փոսթքէսթը կը նպատակադրէ պահպանել բարոյական եւ փաստացի ճշմարտութեան պահպանման, երբ քաղաքականութիւնը եւ ուժը կը փորձեն զայն ջնջել»:

Շարքին մեկնարկը կատարելու համար, առաջին երեք փոսթքէսթները հրապարակուած են որպէս երեք մասերէ բաղկացած խօսակցութիւն՝ հաղորդավար եւ ԶՀԳ-ի հիմնադիր Լին Զովիկեանի եւ միջազգային կրօնական ազատութեան առաջնորդ Նատին Մայենզայի միջեւ: Անոնք միասին կը քննարկեն վերապրողներու առաջնորդութեան, վայրագութիւններու միջոցով ճշմարտութեան պահպանման եւ տուժած համայնքները բացառող խաղաղութեան գործընթացներու վտանգները:

«Փոքրագոյն ճշմարտութիւններ» ծրագրի մեկնարկը կը յաջորդէ Եգիտիներու ցեղասպանութեան 11-րդ ամեակին, Պէյրութի նաւահանգիստի հինգերորդ տարելիցին եւ արցախահայութեան ցեղային գտումին երկրորդ ամեակի ռզելոյչման: 2015-էն ի վեր, Զովիկեան Հանրային գրասենեակը կը համագործակցի վերապրողներու հետ, պաշտպանելու համար անոնց համայնքներուն արժանապատուութիւնը եւ ձայները՝ մարդասիրական դիւանագիտութեան եւ օրէնքի միջազգային դատարաններուն մէջ:

«Իւրաքանչիւր ոճի մէջ, փոքրագոյն ճշմարտութիւնները ամենէն դժուարն են պահպանելու եւ բարձրաձայնելու, սակայն անոնք են, որ արդարութիւնը կարելի կը դարձնեն», ըսաւ Զովիկեան:

«Smallest truths» հասանելի է Spotify-ի, Apple Podcasts-ի, եւ YouTube-ի վրայ, իսկ զրոյցներուն գրուած տարբերակները եւ ուսումնական նիւթերը կրնաք գտնել այստեղ՝ <https://zovpub.org/ZPO-Podcast>

###

Զովիկյան Հանրային Գրասենեակի մասին

2015 թուականին ի վեր, Զովիկյան Հանրային գրասենեակը կը համագործակցի Միջին Արեւելքի եւ Հարաւային Կովկասի համայնքներուն եւ վերապրողներուն հետ՝ բարձրացնելու անոնց ձայները, վերականգնելու արժանապատուութիւնը եւ առաջ մղելու արդարութիւնը՝ հետազօտութեան, մշակոյթի եւ դիւանագիտութեան միջոցով:

2015 թուականին ի վեր,
Զովիկյան Հանրային
գրասենեակը կը
համագործակցի Միջին
Արեւելքի եւ Հարաւային
Կովկասի համայնքներուն եւ
վերապրողներուն հետ՝
բարձրացնելու անոնց
ձայները, վերականգնելու
արժանապատուութիւնը եւ
առաջ մղելու արդարութիւնը՝
հետազօտութեան, մշակոյթի
եւ դիւանագիտութեան
միջոցով:

